«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/115

«25» 01 2024 թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավանեսյան.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար 2024 թվականի դեկտեմբերի 21-ին հայտարարված սիմուլյատորների և վարժասարքերի ձեռքբերման «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-8-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԷԼ ԸՆԴ ԷՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ընկերությունը, Օրենքով սահմանված ժամկետում և պատշաճ ծանուցված լինելով արձանագրված անհամապատասխանությունների մասին, չի շտկել իր կողմից ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջներին համապատասխան (առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ տեխնիկական բնութագրերը, մոդելները, արտադրողները, որոնք պետք է ներկայացվեին Համակարգի՝ www.eauction.armeps.am կայքի միջոցով)՝ խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզիկական անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԷԼ ԸՆԴ ԷՎ»	00522502	ք. Երևան, Երկաթուղիներ 4 փ. 2/6, Էրեբունի, 0041	X	-	-	24.01.2024թ., «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-8-ԵՊԲՀ»

Հիմք ընդունելով վերոգրյալը, Ձեզ ենք տրամադրում «ԷԱՃԱՊՁԲ-2024/16-8-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին վերաբերվող անհրաժեշտ փաստաթղթերը՝ «ԷԼ ԸՆԴ ԷՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տվյալները գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Առդիր՝ 61 թերթ:

Հարգանքով՝

ՌԵԿՏՈՐ **ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

000140